

առաջ կանգնած են մարդկութեան ճշմարիտ բարեկամները: Համանման մարդկանց հետ առաջին անգամ պատահելուց՝ նրանք ակամայ դրուում են և առ հասարակ դառնում են կուռքեր զիւրահաւատ և կեանքի մէջ անփորձ մարդկանց համար: Բայց ժամանակակից ուախիտարեաների ուրիշներին այդպիսի կարեկցարար վերաբերմունքը շատ անկայուն և անյուշալի է: Նրանց մասնակցութիւնը շարունակուում է մինչ այն ժամանակի քանի որ նրանց հաճելի է ձեռնտու է նպատաւում է նրանց ժողովրդականութեան և քանի որ նրանցից ոչ մի առանձին խոշոր զոհողութիւն չի պահանջուում, բացի բաւերից ու բաւերից: Բայց հէնց որ հանդամանքները փոխուեցան, դէպի ուրիշները եղած կարեկցութիւնն էլ սկսում է փոխուիլ ահաճութեան, և այդ կարեկցութիւնն էլ արագապէս անյայտանում է: Եւ նրանք, երեկուայ ձեր այդ բարեկամներն ու բարեկամները, այժմ սկսում են դէպի ձեզ չոր ու սառն վերաբերուիլ և աշխատում են չը նկատել և չը ճանաչել ձեզ: Այդ դեռ քիչ է: Մի խոշոր օգուտի դիպուածում՝ նրանք պատրաստ են լինում մասնել ու վաճառել ձեզ, և յիրաւի՝ շատ յաճախ և՛ մասնուում, և՛ վաճառում են, և որ աւելի ցաւալի ու սարսափելի է՝ մասնելով ու վաճառելով հանդերձ՝ մնում են ըստ առաջնոյն անփրզով ու բարեհոգի, ինքնակամ ժպիտան երեսին: Նրանց շատ հաճելի է, որ շնորհիւ իրանց ծարպիկ գործողութիւններին՝ նրանց անձնական երջանկութիւնը չի ենթարկուիլ ամենաճշին զրկանքի և մինչև անգամ դեռ բազմապատուել է: Հասկանալի է, որ այդ տեսակ մարդկանցից չի կարելի սպասել մարդկային երջանկութեան աճումը: Նրանց գործունէութիւնը մարդկանց լիշուաւութիւնն ու տանջանքը միայն կորոզ է բազմապատուել: Այն ինչ նրանք, ուախիտարեի մի այդ ճշմարիտ կուսակիցները, բացի ուախիտարեան կանոններից՝ ուրիշ բարոյական կանոններ չեն ընդունում: Եւ հէնց այդ իսկ կանոնները ինքնաբերական ուախիտարեի մասնակցութեան, ինչպէս անձնական երջանկութեան մասին եղած վարդապետութեան, այն-

պէս և մարդկային կեանքի վախճանական նպատակի լիշուածութեան անհրաժեշտ պայցոյցներ են:

Այսպիսով դուք է գալիս, որ մարդկային իմաստութիւնը հնարաւորութիւն չունի գոհացուցիչ պատասխան տալու մարդկային կեանքի վախճանական նպատակի հարցին: Որտեղ կարող ենք գտնել նրան:—Այնտեղ, ուր ամբողջութեամբ են յաւանանական Բանի պատգամները, և ամենայն ճշմարտութիւն պարունակուում է մեր Տէր Յիսուս Քրիստոսի վարդապետութեան մէջ, որ զբուած է Աւետարանում և լուսարանած է Նորա առաքելների զբուածքներում:

(Կր շարունակուի):



ՅՈՎՀԱՆՆ ԿՐՈՆՇԿԱՏՅՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ.

Նորերս լոյս է տեսել «Երկու օր Կրոնշտատում» վերնագրով մի գրքոյ, որի հեղինակն է Մոսկուայի Հոգեւոր ճեմարանի տեսչի օգնական Լեւոնովի վարդապետը, 1893 թ. հեղինակը, այն ժամանակ դեռ ևս ուսանող Նոյն ճեմարանի մի փոքր խումբ ընկերներով այցելեց Հայր Յովհաննիս, ստանալու նորա օրհնութիւնը և նորա հարուստ գանձարանից դասեր առնելու իւր և իւր ապագայ պաշտօնավարութեան համար, Հեղինակը, ի միջի այլոց, նկարագրում է Կրոնշտատի մայր եկեղեցում կատարուող ընդհանուր բարձրագոյն խոստովանութիւնը, որ չէ ընդունուած ուրիշ եկեղեցիներում, Ահա այդ հազուագիւտ տեսարանի նկարագիրը, Հայր Յովհաննը գուրս եկաւ սեղանի յետեւից խոնարհ գեմքով առանց կամիլաւկայի և սկսեց խօսել նախ քան խոստովանեցնելը, Նա սկսեց իւր քարոզն առանց սովորական «Յանուն Հոր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ» խօսքերի: Գուր մեղաւորներ, որպէս և ես, եկել էք այս տաճարը զղջալու ձեր մեղքերի համար Յիսուս Քրիստոսի մեր Փրկչի առաջ և ապա ընդունելու ս. Հաղորդութիւնը, արգելք պատրաստուել էք ընդունելու այդ մեծ խորհուրդը, իմացեք որ գուր զղջում էք ոչ թէ իմ այլ Աստուծաւ առաջ, Որը անտեսանելի կերպով ներկայ է այստեղ և Որի Մարմինն ու Արիւնը այժմ սեղանի վերայ է գտնուում, Այսպէս մի քանի զգացում խօսքեր ևս ասելուց յետոյ սկսեց կարգաւ զղջման աղօթքը:

Աղօթքը կատարելուց յետոյ շարունակեց իւր քարոզը, նա խօսում էր պարզ, առանց որ և է ճարտասանական ձևերի. նորա խօսքը զօրեղ էր, նա խօսում էր խորը հաւատով դէպի իւր ամեն մի խօսքը, նոյն իսկ տոնջուելով իւր ամեն մի խօսքի համար, որովհետեւ նա խօսում էր սրտանց և ասում էր այն, ինչ որ իւր անձնական փորձով հաստատապէս համոզուած էր: ոչ թէ զանազան գրքերից հանած «գեղեցիկ գարձուածներ»: Նորա քարոզը ըստ երևութիւն, շատ պարզ էր. կարծես թէ ամեն մի գիւղական քահանայ կարող էր առանց դժուարութեան պատրաստել և խօսել մի այդպիսի քարոզ, նորա քարոզի սկիզբը եւ լսում էի բաւական սառնութեամբ և նոյն իսկ փոքր ինչ հիասթափուած: Ըստ երևութիւն ժողովուրդն ևս անտարբեր էր դէպի նորա քարոզը, Բայց յետոյ եւ չգիտեմ թէ ինչ պատահեց ինձ և այն խառը բազմութեանը, որ մինչ այդ լուռ էր: Մի անսովոր հոգեկան դրութիւն տիրապետեց բոլորին: Սկզբում լսում էին այստեղից այնտեղից թեթեւ հառաչանքներ և կարելի էր նկատել յուզուած ունկնդիրներից ոմանց աչքերից հանգարտ գլորուող արցունքները, Բայց քանի գնում շատանում էին խորը հառաչանքները և ջերմ արցունքները, նս ևս մի ինչ որ արտասովոր բան սկսեցի զգալ իմ մէջ, Որտեղից որ, հոգուս անիմանալի խորքերից, մի բան սկսեց վեր կենալ իմ մէջ և տիրել իմ ամբողջ էութեանը:

Ինձ մօտ մինչ այդ կանգնած էին, ըստ երևութիւն, անտարբեր և աւելի հետաքրքրուող անձինք: Բայց ահա նոքա ևս ծուկն են իջնում և արցունքը նոցա աչքերից ևս գլորում է: Իսկ ինչ էր կատարում այդ միջոցին ժողովրդի մէջ. ամեն կողմից աղաղակում էին. «Տէ՛ր հայր, ների՛ր, տէ՛ր հայր, ողորմի՛ր. մենք բոլորս մեղաւոր ենք, աղօթի՛ր, աղօթի՛ր մեզ համար»:

Ծովը ալեկոծւում էր. այնպիսի աղմուկ բարձրացաւ որ այլ ևս ոչինչ չէր լսուում Հայր Յովհաննի խօսքերից: Հանդարտ, հանդարտ լսեցէք, բարձրաձայն գոչում էր Հ. Յովհաննի ձեռքով իշխանաբար բոլորին ի լուսութիւն հրաւիրելով: Մի քանի վայրկեան աղմուկը դադարեց. բայց յետոյ նոր ուժով կրկին բարձրացաւ, մի տեղից սկսելով և փոքր առ փոքր տարածուելով բոլոր աղօթողների մէջ:

Որոտի նման թնդացնում էր ահագին տաճարը մի ծայրից մինչև միւսը ժողովրդի աղաղակը աղօթքի, թողութեան և ներման համար: Ըստ դժուարութեամբ յաջողուեցաւ լուսութիւնը վերականգնել տաճարում: Հայր Յովհաննի սկսում է կարգաւ երկրորդ աղօթքը մեղայից առաջ և ապա ըստ ցարքի. նորից աղմուկ. «տէ՛ր հայր, տէ՛ր հայր, աղաղակում էին ամեն կողմից, ների՛ր, աղօթի՛ր, և այլ ևս ոչինչ չի լինում ջոկել, «Հանգիստ,

Հանգիստ, լսեցէ՛ք»: ասում է Հ. Յովհաննի, Փոքր առ փոքր տաճարում տիրում է լուսութիւն, ընդհատուելով երբեմնապէս աղօթողների բարի հաւաքանքներով:

Բ՞նչ է զղջումը, ասում էր Հայր Յովհաննի: Զղջումն Աստուծոյ պարգևն է, որ տուաւ մարդկանց իւր Միածին Որդու կատարած աստուածային ճշմարտութեան համար: Զղջումը մի հաստատուն յոյս է, որ ողորմած Տէրը կը թողնէ մեր բոլոր մեղքերը: Ով չէ զղջում, նա եկեղեցու թշնամի է դառնում: Նղալայնէ՛ր և քոյրեր, արդեօք զղջում էք: Պամենոն էք ուղղել ձեր կեանքը: Խոստովանում էք ձեր մեղքերը: Այո՛, դուք շատ և շատ մեղքեր ունեք, որ միտմի թուել իսկ անկարելի է: Սորանով Հայր Յովհաննի վերջացնում է իւր խօսքը և դառնալով դէպի ժողովուրդը՝ ասում է բարձրաձայն և իշխանաբար. «զղջացէ՛ք ձեր արած մեղքերի համար»:

Թէ ի՞նչ կատարուեց այդ րոպէին, անհնար է նկարագրել: Լարուած դրութիւնը հասել էր իւր ամենաբարձր աստիճանին և տիրապետել հաւասարապէս բոլոր ժողովրդին: Սա չէր այլ ևս հանգարտ և խաղաղ ժողովուրդ, այլ մի ալեկոծեալ ծով: Ոմանք լալիս էին, մի քանիսը բարձրաձայն հեծկլտում էին, ուրիշները ընկնում էին երեսների վերայ, ոմանք լուռ կանգնած էին քարացած: Ըստեղ բարձրաձայն բոլորի առաջ խոստովանում էին իրենց մեղքերը. չբաշուելով այն բանից, որ ուրիշները լսում էին: Պէտք էր նայել այդ միջոցին Հայր Յովհաննին. նա կանգնած էր խորապէս յուզուած և զգացուած. նորա շրթունքներն աղօթք էին մըմնջում. նորա հայեացքը դէպի երկինք էր դարձած: Նա կանգնած էր լուռ: Ժողովուրդը կրճքին խաչած: Ինչպէս միջնորդ երկնաւոր դատաւորի և զղջացող մեղաւորների մէջ, ինչպէս երկրաւոր դատաւոր մարդկային խղճի, նորա աչքերից արցունքը հոսում էր. նա՛ ձեռքերով ծածկեց իւր երեսը: Բայց արցունքները գարձեալ գլորում էին և ընկնում սառը յառակի վերայ: Զղջացէ՛ք, զղջացէ՛ք, կրկնում էր երբեմնապէս Հայր Յովհաննի:

Երբեմն նա զարձնում էր իւր հայեացքը դէպի տաճարի մի որ և է կողմը, և այնտեղ բոլորն էլ զգում էին այդ հայեացքը իրանց վերայ, և այդ տեղում ձայները աւելի բարձրանում և սաստկանում էին: Յետոյ տիրում էր ամենուրեք նոյն ձայնը, որպէս զի նորից սաստկանայ այն տեղում, դէպի ուր կը դարձնէր իւր հայեացքը Հայր Յովհաննի: Այս գլուխութիւնը տևեց մօտ հինգ րոպէ: Աւերջապէս Հ. Յովհաննի սրկեց իւր արցունքները, խաչանքեց երեսը ի նշան շնորհակալութեան ժողովրդի թափած զղջման արտասուաց: «Հանդարտ, հանդարտ, եղբայրք», լսում է նորա ձայնը: Յանկալի լուսութիւնը շուտով չէ տիրապետում տաճարի մէջ, Բայց փոքր առ փոքր սկսում

են լուել, ուրուրեք լուում են միայն հոգոցներ և գլորուում են արցունքներ, Լսեցէք, ասում է երկարացնելով իւր ձայնը և. Յովհաննէ, ինձ, ինչպէս և բոլոր քահանաներին, Աստուած տուել է իշխանութիւն թողնելու մարդկանց մեղքերը, Այժմ խոնարհեցրէք ձեր գլուխները, ես կը կարգամ արձակման աղօթքը և դուք Աստուծուց ձեր մեղքերի համար թողութիւն կըտամնաք, Ի՜նչ փառաւոր և խորհրդաւոր բոպէ, երկինքը երկրի հետ հաշտուում է, Աղօթքից յետոյ բոլորն էլ իրենց թեթեւացած էին զգում, կարծես մի ահագին բեռը ընկած լինէր նոցա կրծքից, Մեղքի ծանր բեռից ազատուած, Ժողովուրդը ազատ շունչ քաշեց և շնորհակալութեան արցունքը աչքերին նայում էր իւր բարի հովուին, որ իւր ոչխարներին մեղաց խաւար անդունդներից հանեց առաքինութեան լուսաւոր ճանապարհի վերայ, որ տանում է գէպի երկնաւոր Հօր լուսապայծառ օթեանը:

Քաղուածօրէն թարգ. «Вирж. Вѣд.» Կ. Վ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ԹՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ.

— Անցեալ 1900 թ.-ի գեկտեմբերի 15-ը ռուսաց եկեղեցու համար նշանաւոր օրերից մէկն էր: Այդ օրը ամբողջ ուղղափառ Ռուսաստանը ամենայն շքեղութեամբ և վայելչութեամբ տօնեց իւր եկեղեցու բեղմնաւոր մշակներից մէկի՝ Խերսոնի եպիսկոպոս Իննոկենտիոսի ծննդեան հարիւրամեայ տարեդարձը: Ռուսաց կրօնական մամուլը նրա յիշատակին նուիրեց դանազան յօդուածներ, որոնց մէջ ի վեր էր հանում նորա մատուցած ծառայութիւնները և այն օգուտն ու դարկը, որ նա տուեց ռուս սերնդի կրօնական—բարոյական դատաւարակութեան դործին: Մի թեթեւ դադափար տալու համար այն տօները և հանգէտները մատեն, որոնք գեկտ. 15-ին տեղի ունեցան դանադան դպրոցական և եկեղեցական հաստատութեանց մէջ, առաջ կըբերէր Դերով. вѣст.-ի № 51—52 —ի այն յօդուածը, որ նուիրած է Իննոկենտիոս եպիսկոպոսի յիշատակին:

Այդ օրը Ս. Պետերբուրգի հոգևոր ճեմարանի եկեղեցում ի յիշատակ հանգուցելոյն պատարագ մատուցուեց, որից յետոյ կատարուեցաւ հոգեհանգիստ ի ներկայութեան ճեմարանի տեսչի, ուսուցչական խմբի և ուսանողների:

Պատարագի ժամանակ ճեմարանի Տեսուչ Բորիս եպիսկոպոսը՝ մի սրտառու զամբանա-

կան արտասանեց, որի մէջ համառօտ քայց կըտրուէ կերպով մասնանիշ արաւ այն օգուտները, որ ստացաւ Ռուսաց եկեղեցին հանգուցեալի թէ՛ մանկավարժական և թէ՛ եկեղեցական-վարչական առարկիցում մատուցած ծառայութիւնից: Եկեղեցական հանգիսից յետոյ, նոյն օրը ժամի 1-ին տեղի ունեցաւ Հոգևոր ճեմարանի դահլիճում մէկ երկրորդ հանգէտ, ուր ներկայ էր ամբողջ ճեմարանական խումբը: Այստեղ խօսեց աստուածաբանութեան ուսուցչակետ Լոպուխինը: Ծառախօս ուսուցչակետը աշխատեց ցոյց տալ այն յառաջադիմութիւնը, որ Հոգ. ճեմարանն ունեցաւ հանգուցեալի վեց տարուայ պաշտօնավարութեան ընթացքում: Սակայն, ասում է Լոպուխինը, հանգուցեալ Իննոկենտիոս աւելի յայտնի է իւր աստուածաբանական գիտնական աշխատութիւններով, որոնց մէջ առանձնապէս ուշադրութեան արժանի է «Մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին օրերը» երկը:

Լոպուխին վերջացրեց իւր խօսքը, շեշտելով նրա հովուական այն արեւութիւնն ու քաջութիւնը և այն ինքնուրացութիւնը, որ նա ցոյց տուեց Ղըբմի պատերազմի ժամանակ, որին հետեց երգեցիկ խմբի «Блаженн людѣ» հոգևոր երգը: Հանգէտը փակուեց Տեսչի աղօթքով և բարեմաղթութիւններով:

* *

— Դերով. Вѣдом. շարաթաթերթի անցեալ տարուայ № 51-ի մէջ տպուած է Պերմի և Պենզայի հոգևոր դպրանոցների գոյութեան հարիւրամեայ յօդուածն ի հանդիսի նկարագրութիւնը: Նոյեմբերի 10—12 Պերմում մեծաշուք հանգէտով կատարուեցաւ տեղական հոգևոր դպրանոցի հարիւրամեայ յօդուածն տօնը, որին մասնակցում էր տեղական հոգևորականութիւնը իւր առաջնորդով, Ժողովուրդը և հետո տեղերից եկած պատգամաւորներ: Պատարագից յետոյ դըպրանոցի դահլիճում կատարում է օրուայ խնական տօնը, ուր աւուր պատշաճի ճառեր արտասանուելուց յետոյ, երեկոյեան տեղի է ունենում երաժշտա—գրականական երեկոթ, որին մասնակցում էին դպրանոցի աշակերտները և այն պատգամաւոր հիւրերը, որոնք այնտեղ էին եկած լայնածառալ Ռուսաստանի դանադան կողմերից: Նոր ձևով և շքեղապէս կատարուեցաւ նոյեմբերի 26-ին Պենզայի հոգևոր դպրանոցի հարիւրամեակը:

* *

— Ռուսաց հոգևոր դպրոցների թիւը օր օրի վրայ շատանում է: Անցեալ նոյեմբերի 8-ին Սամարա դուստի Օրշառովկա գիւղում բացուեցաւ մէկ դպրոց, որի նպատակն է եկեղեցական—ժողովական միդատեան և երկդատեան դպրոցների համար ուսուցիչներ պատրաստել: